

Ս. Գ. Աբրահամյան

ԺԱՄԱՆԱԿԱԿՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՈՐՈՇԻՋ ՀՈԴԸ

Հայերենի որոշիչ հոդն է (ը)։ Ը-ն, ըստ էության, ն-ի համարժեքն է, բայց արձակապես նույն իմաստն ունի և նրանից տարբերվում է միայն կիրառության մեջ (ոչ թե կիրառության իմաստով, այլ տեղով, դիրքով)։ Ն հոդը սովորաբար դրվում է ձայնավորով վերջացող բառերի վրա, իսկ ը-ն՝ բաղաձայնով վերջացողների վրա։ Ինչպես՝ քաղաքը, գյուղը, տնտրը, ծառը, բայց՝ երեխան, այգին, տարին։

Ինչպե՞ս է առաջացել ն հոդի այդ համարժեքը (ը) կամ, կարելի է ասել, տարբերակը։ Ը-ն առաջացել է և գործածվում է դյուրհնչության պահանջով։ Ակադ. Հր. Աճառյանը ը հոդի առաջացումը անուղղակիորեն կապում է-րն հանգող բառերի հետ։ «Հայերենի մեջ՝ -ըն հանգող բառերը՝ անշեշտ հնչման պատճառով, կորցնում են իրենց վերջի ն ձայնը. այսպես ձուկն > ձուկը > ձուկ, եօթն > եօթը > յօթ։ Սրա համեմատ էլ բաղաձայնահանգ բառերը իրենց ծայրի որոշիչ ն հոդը դարձրին ը»¹։

Ծիշտ է վարվում ակադ. Հր. Աճառյանը, որ ը հոդը համարում է ն-ից առաջ լսվող ը-ի հետագա արժեքավորումը։ Բայց մեզ թվում է, որ բաղաձայնահանգ բառերի ն հոդի անկումը կապ չունի ձուկն, յոթն, ձեռն և նման բառերի վերջին ն-ի անկման հետ, որը արմատական բաղաձայն է, քերականորեն արժեքավորված չէ, հետևապես և նրա անկումը չի ենթադրում ը-ի արտասանության անհրաժեշտություն, մինչդեռ ն հոդի անկումն ստեղծում է նրանից առաջ արտասանվող ը-ի պահպանում և արժեքավորում։ Համոզվելու համար, որ իսկապես ն հոդի անկումը և դրա հետևանքով ը հոդի առաջացումը կապ չունի ն-ով վերջացող բառերի ն-ի անկման հետ, պետք է նկատի ունենալ նաև այն, որ մեր որոշ բարբառներում բառերի ն վերջահնչյունը չի ընկել. առաջ պահպանվում է մինչև օրս, բայց այդ բարբառներում էլ առաջ է եկել ը հոդ այն օրինաչափությամբ, ինչ օրինաչափություն որ գոյություն ունի ժամանակակից հայերենում և բարբառներում։ Բերենք այդ կարգի օրինակներ Ղարաբաղի և Հաղորթի բարբառներից.

ձուկն > ձուկուն || ծուկն, որոշյալ առումով՝ ծուկունը || ծուկնը. մուկն > մուկուն || մուկն, որոշյալ առումով՝ մուկունը || մուկնը. դուռն > տոռն, որոշյալ առումով՝ տոռնը. եզն > յեզն, որոշյալ առումով՝ յեզնը. մրջիմն > վրչիմն. որոշյալ առումով՝ վրչիմնը և այլն։

Նվ այսպես ն հոդի կոդքին առաջացել է քերականական նույն իմաստով ու նշանակությամբ և միայն կիրառական տարբերություն ունեցող ը հոդը։

Ն (ը) հոդը հայերենի զարգացման արդի էտապում ավելի բարձր վերադասության է հասել, քան հայերենի մյուս հոդերը։ Ստացական հոդերը (ս, դ) հիմնականում արտահայտում են անձնական գերանվան 1-ին, 2-րդ դեմքերի

¹ Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 3, էջ 987։

սեռականի իմաստ, ցուցական հոգր (ս) հիմնականում արտահայտում է ցուցական դերանվան իմաստ, դիմորոշ հոգերն էլ (ս, դ)՝ համապատասխան դեմքերի անձնական դերանվան իմաստ:

Այսպիսով՝ հայերենի մյուս հոգերն իրենց իմաստով և կիրառությամբ սեռիս շատ կամ քիչ չափով համապատասխանում են որոշ բառերի իմաստներին, և երբեմն կարելի է լինում դրանցից մեկը փոխարինել մյուսով (հոգր բառով կամ հակառակը): Լեզվական մասնիկների և համապատասխան բառերի իմաստային աչապիսի մոտիկությունը խոսում է այդ մասնիկների իմաստի վերացականության համեմատաբար փոքր չափի մասին: Մինչդեռ որոշիչ հոգր իմաստով և կիրառություններով բոլորովին հեռանալով այն դերանունից, որին համապատասխանում էր և որից թերևս ծագել է, — դարձել է միանգամայն վերացական իմաստով՝ քերականական մասնիկ:

Արդի հայերենում որոշիչ հոգ կարող է գրվել սովորաբար բառի ուղղական, տրական, հայցական հոլովների վրա՝ Այսպես. «Վազոնը... լիքն էր բաղմամբով ճամփորդներով» (Սիրաս, Հայր և որդի): «Երբեմն գիշերները զարթնում էր ու երկար մտածում» (Արազի): Մոտեցանք անտառին՝ Սևռական, բացառական, գործիական և ներդոյական հոլովները որոշիչ հոգ սովորաբար չեն ստանում: Սակայն աշխարհաբարի հատկապես մի փոքր ավելի վաղ շրջանի երկերում, երբեմն հանդիպում ենք բացառական, գործիական, ներդոյական հոլովների հետ ևս որոշիչ հոգի գործածությունների, որոնք բարբառայնության արտահայտություն են: Օրինակ՝ «Իր ցանցիցը մի քայլ հեռվում մի մարդ նշմարեց» (Վ. Փափազյան): «Քահանան նրանց տնիցը անպակաս էր. օրհնում էր հացը, երբ սկսում է թխել... և թասը, երբ կատուն ջուր էր խմել սրջիցը» (Վ. Փափազյան): «Նոր եկած եղբոր զխոսվր պտտելիս կլինի» (Վ. Փափազյան):

Այս վերջին երեք հոլովների հետ որոշիչ հոգի գործածությունն անցյալում այնքան արտասովոր չէր, որքան այժմ: Նույնիսկ քերականները իրենց դասագրքերում նշում էին աշխարհաբարի այդ հոլովներում որոշիչ հոգի գործածության փաստը, իհարկե, նկատելով, որ այնուամենայնիվ այդ հոլովաձևերի անհոգ գործածությունն ավելի սովորական ու տարածված է, քան հոգով գործածությունը: Ահա թե ինչ է գրում Մ. Պալասանյանն այդ մասին. «Սևռական հոլովը երբեք հոգ չի ընդունում: Մյուս հոլովները առանց բացառության կարող են հոգ առնել. միայն դրավոր լեզվի մեջ բացառական, գործիական, ներդոյական հոլովները ավելի անհոգ են վարվում, քան թե հոգով»¹: Ս. Պալասանյանի այս միտքը հաստատվում է գեղարվեստական գրականության մեջ որոշիչ հոգի գործածության փաստերով: Եթե սրանից շուրջ ութ տասնամյակ առաջ ասվում էր, որ բացառական, գործիական և ներդոյական հոլովները «ավելի ան-

¹ Ի դեպ նշենք, որ առհասարակ ցուցական դերանունների 3-րդ շարքի դերանունները (այն, այնպես, այնպիսի և այլն) ավելի հակված են վերացականացման, և նենց այժմ համեմատաբար ավելի վերացական են, քան թե 1-ին, 2-րդ շարքի դերանունները (այս, այսպես, այսպիսով, այդ, այդպես, այդպիսի և այլն):

² Սևռական հոլովը հոգ է ստանում, երբ գործածվում է իրրի փոխանուն, ըստ սրում, եթե սևռականը վերջանում է ձայնավորով. ապա նրա փոխանունը կազմվում է կրկնակի հոգով (որից հոգի բուն ֆունկցիան կատարում է վերջինը), ինչպես՝ առարկանը, զպրոցինը, Արամինը և այլն. իսկ եթե սևռականը վերջանում է բացառականով, ապա այդպիսինի փոխանունը կազմվում է մեկ հոգով, ինչպես՝ իմը, մերը, ձերը, Լևոնինը և այլն:

³ Ս. Պալասանյան, Քերականություն մայրենի լեզվի, Թիֆլիս, 1871, էջ 112:

հոգ են վարվում, քան թե հոգով», ապա այսօր մեր գրական լեզվի մասին այդպես արտահայտվել չենք կարող։ Այժմ այդ հոլովների հետ որոշիչ հոգ գործածելը մեր լեզվի մեջ խորթ է։ Նո հոգը կարող է դրվել ներգոյականի և գործիականի ձևերի վրա միայն մի երկու կապակցություններում՝ երբ հոլովաձևին հաջորդում է էօ ժանդակ բայը. «Ինչու՞մ է բանը», «Գլուխը բացվե՞լ է տալիս» (Արագի) և այլն։ Նույնիսկ այսպիսի կապակցություններում կամ դարձվածներում էլ այն շատ սակավ է դործածվում։

Որոշիչ հոգի հիմնական նշանակությունը բառի որոշյալ առման ձևավորումն է։ Եվ ի՞նչ նկատի ունենանք, որ բառի անորոշ առումը ժամանակակից հայերենում գոյություն ունի ի հակակշիռ որոշյալ առման, և որ այդ պատճառով էլ անորոշ առումը դժվար է պատկերացնել առանց լեզվի մեջ որոշյալ առման առկայության, ապա պարզ կդառնա որոշիչ հոգի դերը ժամանակակից հայերենում որոշյալ և անորոշ առումների քերականական կատեգորիաների առկայության հարցում։

Հայտնի է, որ որոշյալ առումով բառը ցույց է տալիս ծանոթ կամ հայտնի առարկա։ Բայց անհրաժեշտ է պարզել, նախ, թե այդ առարկան ո՞ւմ է ծանոթ՝ խոսողի՞ն, թե՞ խոսակցին, թե՞ երկուսին, և երկրորդ, ի՞նչ ենք հասկանում ծանոթ կամ հայտնի առարկա ասելով։

Վերցնենք որևէ բառ անորոշ և որոշյալ առումով։

Աշտոր երեկ ինձնից հետաքրքրական բովանդակությամբ և շքեղ կազմով զիրի տարավ։ Նա այսօր ինձ ասաց, որ զիրի կարգացել է մեծ հափշտակությամբ։

Այս օրինակից երևում է, որ խոսողը խոսելու մոմենտին և նախապես գիտեր ընդգծված բառերի ցույց տված առարկան։ Նա նույնիսկ ճանաչում է այդ գիրքը (հետաքրքրական բովանդակությամբ և շքեղ կազմով)։ Քանի որ այս օրինակում միևնույն ժամանակ խոսողը նույն առարկան անվանում է անորոշ և որոշյալ առումներով, նշանակում է, գիրք առարկան մեկ անորոշ, մեկ որոշյալ առումով անվանելը չի պայմանավորված խոսողի կողմից այդ առարկայի ճանաչման տարբեր չափերով, կամ էլ առարկան խոսողին մի դեպքում հայտնի և մյուս դեպքում անհայտ լինելով։

Ինչ վերաբերում է խոսակցին, ապա նա զիրի բառով (անորոշ առումով) առաջին անգամ իմանում է, թե ինչ է տարել Աշտոր խոսողից։ Այդ գրքի մասին խոսակցին իմանում է առաջին անգամ, ուրեմն՝ այդ առարկան նրան անծանոթ էր նախքան նրա մասին իրեն հայտնելը։ Հենց այդ պատճառով էլ այն անվանվում է անորոշ առումով։ Երկրորդ նախադասության մեջ նույն առարկայի անունը դործածված է որոշյալ առումով։ Պատճառն այն է, որ խոսակցը առաջին նախադասությանից ծանոթ է առարկային, նա գիտե, թե ո՞ր առարկայի, ո՞ր գրքի մասին է խոսքը, ո՞ր գիրքն է Աշտոր կարդացել մեծ հափշտակությամբ։ Ուրեմն՝ բառը որոշյալ առումով դործածելու համար անհրաժեշտ է, որ նրա ցույց տված առարկան նախապես ծանոթ լինի ոչ միայն խոսողին, այլև խոսակցին։

Բայց ի՞նչ է նշանակում տվյալ դեպքում իմանալ առարկան, ծանոթ լինել առարկային։ Այդ բնավ չի նշանակում առարկայի խորը ճանաչում, նրա հատկանիշների լավ իմացում և այլն։ Ոչ միայն խոսակցը, այլև խոսողը կարող են որոշյալ առումով դործածված բառի ցույց տված առարկան լավ չճանաչել, և այդ չէ կարևորը որոշյալ առման համար։ Հաճախ առարկային ծանոթ լինելը,

այն ճանաչելը սահմանափակվում է այդ առարկայի գոյությունը (ընդհանրապես կամ տվյալ պայմաններում) խմանալու փաստով միայն: Այդ է պատճառը, որ մեկ անգամ առարկայի անունը անորոշ առումով գործածելուց հետո կարելի է լինում այն գործածել որոշյալ առումով:

Բերենք օրինակներ: «Մինչդեռ այն վարագույրի ծալքերից մեկում երևաց ձարձրված հագուստով մի մարդ: ...Գիկ-բգիկ հագուստի ծվենները մարմնի վրա պահպանելու համար մարդն իրեն կապկպել էր տարբեր տեսակի շվաններով ու լարերով» (Գ. Սևունց, Թեհրան): «Նրա դեմք, մինչև ծնկները հասնող ձյան մեջ, ելավ երկարահասակ, վտիտ մի մարդ տալօրինակ բռնով:

— Նղրայր, մոտերքում կրակ կա, — հարցրեց աղջկան շալված մարդը» (նույն տեղում): «Դրանք բոլորը բոկոտն, խեղանդամ մուրացկաններ էին... Մեծ քաղաքում այդ կիսամերկ մուրացկանները թվում էին թշնամիների կողմից հալածված վտարանդիներ, որոնք շրջում էին ապահով մի անկյուն և ուտելիք գտնելու համար» (նույն տեղում): Այսպիսով, այս օրինակներում խոսողին անհայտ առարկայի անունը նախ ներկայացվում է անորոշ առումով և ապա իրեն ծանոթ առարկայի անուն՝ որոշյալ առումով:

Սակայն միշտ չէ, որ բառի որոշյալ առումով գործածությունը նախորդում է նրա անորոշ առումով գործածությունը: Հաճախ դրա անհրաժեշտությունը չի էլ լինում: Այսպես, մենք ասում ենք. երկինքն ամպել է, անձրևն սկսվեց, ղետին՝ ձյունով ծածկվել է, արևելքը շառագունել է և այլն, ու կարիք չենք զգում ընդգծված և նման շատ բառեր նախապես գործածելու անորոշ առումով. սույն բառերը կարելի է հենց սկզբից գործածել որոշյալ առումով, ինչպես գործածված են այդ նախադասություններում: Դրա պատճառն այն է, որ երկինք, ամպ, արև, ղետին, արևելք բառերի առարկայական վերաբերությունը միշտ միանգամայն հայտնի է բոլորին՝ թե՛ խոսողին, թե՛ խոսակցին. բոլոր մարդիկ էլ գիտեն, թե ինչ է կամ ո՞րն է երկինքը, անձրևը, ղետին, արևելքը և այլն: Այդպես կարող են հանդես գալ եղանի առարկաների և որոշ հանրահայտ առարկաների, երևույթների անունները:

Օրինակ՝ «Մուխր թանձր քուլաներով դուրս էր վիժում ծիսանից» (Ն. Զարյան): «Թանախանություն գիտական օրենքներին քաջիզմը հակադրեց իսապիտալը, բնագիտական» (Խաչակյան): «Թեթև Բամին... քշեց ղետին: Թափված ղետին տերևները» (Գ. Սևունց, Թեհրան): «Սովետական կյանքը բնական էր թվում նրան, ինչպես օդը, ջուրը, արևը: Ո՞վ կարող էր պրկել աշխարհը օդից, ջրից ու արևից... Արթնանում է բնությունը, երկիրը պատում դալար կանաչով» (Հր. Քոչար, Մեծ տան գավախները):

Նրբեմն այնպիսի բառեր, որոնք ցույց են տալիս ոչ եզակի առարկաներ, նույնպես կարող են առանց նախապես անորոշ առումով գործածվելու, զբղվել որոշյալ առումով: Այսպես. «Արուսը պրիմուսը վառեց» (Ն. Զարյան, Հացավան): «Արուսը Հեռին թղթերից մի թերթ պոկեց, բանաժամանը հայելու կողքից վերցրեց ու դրեց սեղանի վրա, զրիչը ձեռն առավ ու սկսեց մտածել» (Ն. Զարյան, Հացավան): «Մի երեխա (որ գտնվում է գնացքի վագոններից մեկում, — Ս. Ա.) կանաչ ուտենու ճյուղը պարզեց հեռագրացունին, բայց չկարողացավ դիպցնել ու ծիծաղեց» (նույն տեղում):

Այս բնագծված բոլոր բառերը հեղինակը որոշյալ առումով գործածում է առանց նախապես անորոշ առումով գործածելու, այսինքն՝ առանց նախապես հայտնելու, որ տանը պրիմուս կա, հայելու կողքին կան թանաքաման, զրիչ,

երկաթուղու մոտ՝ հեռադրասյուն: Բայց նա այդ չի հայտնում, անշուշտ նշված առարկաների դոյությունը այդ պայմաններում կամ տեղերում համարելով հասկանալի:

Էլ ավելի որոշակի ցույց տալու համար, որ առարկայի՝ տվյալ պայմաններում կամ տեղում դոյություն ունենալը հասկանալի և սովորական լինելը կարևոր պայման է այդ առարկաների անունները որոշյալ առումով գործածելու համար, համեմատենք տարբեր առարկա նշանակող բառերի գործածությունը նույն նախադասության մեջ:

Մի երեխա (վաղոնում) ձեռքը պարզեց դեպի պատուհանը:

Մի երեխա (վաղոնում) ձեռքը պարզեց դեպի կոնդուկտորը:

Մի երեխա (վաղոնում) ձեռքը պարզեց դեպի ինժեները:

Մի երեխա (վաղոնում) ձեռքը պարզեց դեպի բժիշկը:

Վերջին երկու ընդգծված բառերը որոշյալ առումով կարելի է գործածել, եթե դրանց նախորդել է այդ բառերի անորոշ առումով գործածությունը, այսինքն, եթե նախապես հայտնվել է, և խոսակիցը գիտե, որ վաղոնում ինժեներ և բժիշկ կան: Առաջին երկու բառերի նախապես անորոշ առումով գործածությունը պարտադիր չէ՝ այդ բառերի ցույց տված առարկայի և անձի՝ վաղոնում գոյություն ունենալը հասկանալի լինելու պատճառով: Իսկ ինժեների և բժշկի դոյությունը վաղոնում նախապես ենթադրվել և հասկանալի լինել չի կարող: Այլ պայմաններում ինժեներ, բժիշկ բառերը կարող են սկզբից իսկ գործածվել որոշյալ առումով:

Ինքնին ստացական իմաստ ունեցող բառերը՝ ևս սովորաբար գործածվում են որոշյալ առումով: Դրա պատճառն այն է, որ այդ բառերի (գլուխ, բերան, աչք, դեմք և այլն) ցույց տված առարկաների՝ ամեն մարդու ունենալը հանրահայտ ճշմարտություն է: Օրինակ՝ «Այս խոսակցության ժամանակ արծվաքիթ մի մարդ, գլուխը հարեանի ուսին դրած նիհում էր. հանկարծ աչքերը բանալով, նա հետաքրքրվածորեն նայեց Ֆարին և գլուխը թափահարեց նիրհ իրենից վանելու համար:

— Վա, նոր մարդ է եկել...

Բայց այդ նոր մարդ Ֆարին... մյուսների պես զգգված ու կեղտոտ չէր. դեմքին կար դուրալի գունատություն, աչքերը թախծոտ էին. շուրթերը թեթևակի կծկված, ինչպես լաց լինելուց առաջ (Գ. Սևունց, Թեհրան):

Շատ հաճախ որոշյալ առումով են գործածվում նաև հասարակ գոյականները իբրև տեսակի անուն: Պատճառն այն է, որ առարկաների տեսակները սովորաբար հայտնի են բոլորին, հետևապես նաև խոսակիցներին. բոլորին էլ ծանոթ են, ասենք, հետևյալ տեսակի առարկաները. գրիչ, քար, երկաթ, ջուր, շենք, ճանապարհ, դաշտ, մեքենա, թուղթ, գիրք, բամբակենի և այլն: Ուրեմն և այս առարկաների մասին ընդհանուր դատողություններ անելիս սովորաբար բառը գործածվում է որոշյալ առումով: «Ամառը... բամբակենին ծաղկում է, ցորենի հասկերը կարմրում են» (Հր. Քոչար, Մեծ տան զավակները): «Զինվորականն այդպես չպետք է լինի» (նույն տեղում):

Այսպիսով՝ հաճախ բառը որոշյալ առումով գործածվում է այն դեպքում, երբ այդ բառի ցույց տված առարկան խոսակցին հայտնի կամ ծանոթ է նա-

⁵ Այս մասին տես մեր «Արդի հայերենի ստացական հոդերը (երևանի Պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», հատ. 42, 1953):

խապես: Այդ առարկան խոսակցին կարող է ծանոթ լինել տարբեր եղանակներով կամ միջոցներով:

ա) խոսողը նախքան տվյալ բառը որոշյալ առումով գործածելը կարող է գործածել անորոշ առումով:

բ) Տվյալ առարկան կարող է հայտնի լինել ինչպես բոլորին, այնպես էլ խոսակցին, որպես հանրահայտ եզակի առարկա. արև, լուսին, երկինք, երկիր, գետին և այլն:

գ) Տվյալ բառը կարող է եզակի առարկա ցույց շտալ, բայց կարող է հասկանալի լինել նրա առարկայական վերաբերությունը՝ տվյալ պայմաններում, տեղում նրա սովորական, հայտնի գոյությունը շնորհիվ:

Բառը որոշյալ առում է որոշիչ հոգ կարող է ունենալ նաև որոշող վերադրի շնորհիվ:

Որպես որոշող վերադիրներ կարող են հանդես գալ.

1. Դասական րվականներ.

«Յրրոդ օրը պատահեց անսպասելի մի բան» (Ս. Զորյան): «Բայց հենց առաջին գիշերը նա անհանգիստ անցրեց» (Ս. Զորյան): «Ես Հացավանում քո առաջին բաեկամն եմ» (Ն. Զարյան, Հացավան): «Բայց երկրորդ ոստիկանը, ցույց տալով մետաղե ատամները, ջղայնացավ» (Գ. Սևունց, Թեհրան):

2. Գերադրական աստիճանի ածականներ.

«Վերջինս ամենաօրինակելի բրդաղն էր ամբողջ կոլխովում» (Ն. Զարյան, Հացավան): «Այնուհետև եկավ Մեծ Հոկտեմբերը, որ պատմական տարեգրությունների ամենափառանկ օրն է» (Հր. Քոչար, Մեծ տան զավակները), «Մի ժամ առաջ Կլարա Սարխոշովան իրեն ամենաերջանիկ կինն էր համարում» (նույն տեղում):

3. Հատուկ անուններով և առհասարակ գոյականով արտահայտված որոշիչներ.

«Եվ Գի՛ճ ապերը կանչեց ավելի բարձր» (Ս. Զորյան): «Հունիս ամիսն էր. եղանակը՝ տոթ» (Նար-Դոս): «Գրիգոր առաւ էլ է գալիս» (Վ. Փափազյան):

4. Այս, այդ, այն, սույն, նույն, միննույն, մյուսը, այսինչ, բոլոր, ողջ, ամբողջ, համայն, ֆանիերորդ և այլ գերանուններ.

«Այս բանն ինձ վշտացնում էր սաստիկ» (Ս. Զորյան): «Մի օր էլ այդ նույն տղաները մոտենում են ինձ» (Ս. Զորյան): «Ասում է դարձյալ նույն տղան» (Ս. Զորյան): «Ամբողջ դասաբանը բողոքում է» (Ս. Զորյան): «Ողջ ժողովուրդը գինվորագրված է» (Դ. Դեմիրճյան): «Բոլոր կենդանիները դուրս էին թափվել» (Նար-Դոս):

Պետք է նկատի ունենալ, սակայն, որ ժամանակի անունները (հայցական հոլովով) ժամանակի պարագայի պաշտոն կատարելիս այս, այդ, այն, մյուս, ողջ, ամբողջ գերանուններով արտահայտված որոշիչ ունենալիս սովորաբար դրվում են անորոշ առումով: Որինակ՝ «Այդ ամսու էս իջել էի իմ լավ բարեկամի մոտ» (Նար-Դոս), հմմտ. այդ ամառը շատ լավ անցկացրինք: «Այդ երեկո՛ւնրան կթեց փոքր տիրոջ կինը» (Ս. Զորյան): Հմմտ. ես չեմ մոռանա այդ երեկոն: «Այս գիշեր իսկ սուրհանդակներ ուղարկենք մեր գորագնացներին» (Դ. Դեմիրճյան): «Մյուս առավոտ պիտի տանեի աղջկանս արևի տուն» (Արազի):

5. Հատկացուցիչներ.

«Մեր գործը արդար է, պատմության լուրիկան մեր կողմն է. մեր կողմն է նվաճված ժողովուրդների համակրանքը» (Իսահակյան): «Ընկերս նկատելով

իմ հուզմունքը, աշխատեց հանգստացնել» (Ս. Զորյան) «Մեր տեսուչը մի օր կանչեց ինձ իր մոտ (Ս. Զորյան)։ «Գի՞տե՞ս ուր ո՞նց ելնելու՞՝ առաջնորդում է նրան հոր դարձնոցը» (Ս. Զորյան)։

Սակայն երբ սեռական հոլովը արտահայտում է հատկանիշի իմաստ, ունենում է ածականի նշանակություն, հատկացյալը սովորաբար դրվում է անորոշ առումով, ինչպես որ սովորաբար դրական և համեմատական աստիճանի ածականներով արտահայտված որոշիչների որոշյալները։ Սրինակ, «Նրկար Վաստն... տղամարդու ձայն ունի» (Ս. Զորյան)։ «Բայց սիրտս... կարոտել էր մոր գրկի» (Շիրազ)։ Նման սեռականները նույնիսկ երբեմն կարելի է փոխարինել հարաբերական ածականներով՝ տղամարդկային ձայն, մայրական լիրկ։

6. Որոշ հարաբերությամբ առարկա, տեղ ցույց տվող, ցուցականության որոշ իմաստ ունեցող մի շարք բառեր։ միջին, վերջին, նախորդ, հաջորդ, հետևյալ, նշված, վերոհիշյալ և այլն։

Սրինակ՝ «Բայց հետևյալ օրը ահա թե ինչ պատահեց» (Նար-Դոս), «Անցյալ օրը դրանցից մի երկուսը մոռենում են ինձ» (Ս. Զորյան)։ «Բայց վերջին դեպքերը նորից հաստատեցին, որ դոկտոր Ազադին մնում է ամենասիրված դասախոսներից մեկը» (Գ. Սևունց)։

Տեղի սղության պատճառով այստեղ չենք քննում որոշ շեղումներ։

Որոշիչ հոգր գործածվում է ոչ միայն գոյականների հետ, այլև առարկայի հատկանիշ ցույց տվող բառերի հետ։ Խոսքը վերաբերում է ածականներին, թրվականներին, դերանունների մեծ մասին։ Հոգ ստանում են նաև ենթակայական հարակատար և անորոշ դերբայները։

Բոլոր ածականները, թվականները, ենթակայական, հարակատար ու անորոշ դերբայները կարող են որոշիչ հոգ ստանալ։ Որոշիչ հոգ չեն ստանում հատկանիշ ցույց տվող դերանուններից մի քանիսը. այս, այդ, այն, ինչ-որ, ինչ-ինչ, որոշ, մի շաբաթ, որևէ, համայն, ամենայն և այլն։ Թվականներից հոգ չեն ընդունում ինն, տասն, ինչպես և դրանցով բաղադրված թվականները։ Սրինակ՝ «Քանի՞ տարեկան եք, մատակարարման պետ,— հարցրեց նա։ Մինաս Մելիքյանը պատասխանեց, որ փոքրահասակ լրացել է» (Հր. Քոչար)։

Երկու և բանի բառերը, ինչպես և այն բարդ կամ բաղադրյալ բառերը, որոնցում այդ բառերը հանդես են գալիս որպես երկրորդ բաղադրիչ, բառի ուղիղ ձևի և որոշիչ հոգի միջև վերականգնում են և գրաբարյան հոգնակի հայցականի հոլովակերտը. երկուսը, մի երկուսը, տասներկուսը, բանիսը, մի բանիսը և այլն։

Ցուցական դերանուններից այսպիսի, այդպիսի, այնպիսի նույնպիսի հարցական-հարաբերականներից՝ ուրպիսի, ինչպիսի, մի խոսքով՝ այն դերանունները, որոնց երկրորդ բաղադրիչն է — պիսի, որոշիչ հոգ ընդունում են փոխանուն սեռականների պես, այսինքն՝ ստանում են նն կամ նր կրկնակի հոգերը, որոնցից վերջինն է այժմ ըստ էության հոգի դեր կատարում։

Մի բառի, ինչպես և մի-ն որպես երկրորդ բաղադրիչ ունեցող բաղադրյալ բառերի որոշյալ առման դեպքում մի բաղադրիչի փոխարեն հանդես է գալիս մեկը՝ մի — մեկը, ամեն մի — ամեն մեկը, ոչ մի, ոչ մեկը։

Որոշիչ հոգը քննարկվող բառերի իմաստը դարձնում է որոշյալ, ինչպես որ նա որոշյալ է դարձնում գոյականների իմաստը։ Սակայն որոշիչ հոգի՝ այդ բառերին հաղորդած իմաստը չի կարելի նույնացնել գոյականներին տված

իմաստի հետ: Բացի դրանից, այդ բառերը բոլոր դեպքերում որոշիչ հոդի միջոցով միենույն իմաստը չեն ստանում: Դրանց իմաստային տարբերությունները պայմանավորված են նախ հոդ ստացող բառի իմաստով և երկրորդ՝ խոսքի նպատակով:

Նշված բառերի հետ (բացի անորոշ դերբայից) գործածվող որոշիչ հոդի ամենասովորական իմաստն ու դերն այն է, որ տվյալ բառով արտահայտված հատկանիշը կրում է մի բան, որ այդ հատկանիշը ունի իր կրողը: «Կանանցից մեկը ամենից ջղախի՛ն, ամենից համբերատարն էր» (Նար-Դոս): «Վերավորներից մի քանիսը տեղում շտկվեցին և նայեցին Դուդնիկին» (Հ. Սիրաս): «Քաջն ու վախկոտը կռվի մեջ կերևան» (Հր. Քոչար), «Նա չէր զգում, որ խմբերով քայլող մարդկանց արանքը ձեղքելով՝ հրում է մեկին կամ մյուսին» (Հր. Քոչար): Այս օրինակներում ընդգծված բառերը ոչ միայն հատկանիշ են ցույց տալիս, այլև ցույց են տալիս, որ այդ հատկանիշներն ունեն իրենց կրողները: Այսպես, ջղախի՛ր նշանակում է «ջղախին կինը», համբերատարն նշանակում է «համբերատար կինը», մի քանիսը նշանակում է «մի քանի վերավոր», «Քաջն ու վախկոտը» նշանակում է «քաջ ու վախկոտ մարդիկ»:

Իհարկե, այս և նման կոնկրետ իմաստները սովորաբար իմացվում են խոսքից, նախադասությունից:

Այսպես, խոսքից դուրս երկուսը կարող է նշանակել «երկու գիրք, մատիտ, տուն, մարդ» և այլն, լավը կարող է նշանակել «լավ գիրք, մատիտ, տուն, մարդ» և այլն, բոլորը կարող է նշանակել «բոլոր գրքերը, մատիտները, մարդիկ» և այլն: Այս տեսակետից մյուս բառերից որոշ շափով տարբերվում են ենթակայական և հարակատար դերբայները: Տարբերությունն այն է, որ երբեմն գոյականաբար գործածված դերբայից կարելի է իմանալ դերբայով արտահայտված գործողություն կատարելը կամ գործողության արդյունքը ա՛նձ է, թե՛ իր: Այդ բացատրվում է նրանով, որ որոշ գործողություններ կան, որ միայն անձը կարող է կատարել և այլ գործողություններ՝ առարկաները: Իհարկե, խոսքը բոլոր բայերին չի վերաբերում. քանի որ շատ գործողություններ կարող են կատարել և՛ անձինք, և՛ առարկաները: Այսպես, երգողը, նվագողը, խոսողը, մտածողը և նման շատ բայերի ցույց տված գործողությունները սովորաբար կատարում են մարդիկ, ուրեմն և այդ ձևերի տակ պետք է հասկանալ «երգող մարդը», «նվագող, խոսող, մտածող մարդը»: Վերջիններս նույն բառերի հարակատար ձևերը՝ երգածը, նվագածը, խոսածը, մտածածը: Հասկանալի է, որ գոյականաբար գործածված այս դերբայների մեջ եղող առարկայական վերաբերությունը անձերի վրա տարածվել չի կարող:

Սակայն որոշ դերբայների իմաստից գործողություն կատարողի կամ գործողության արտադրանքի, արդյունքի իր կամ այլ բան լինելը իմանալը չի կարող բավարարել խոսողի պահանջը: Թե խոսքը ո՞ր առարկայի և ո՞ր անձի մասին է, ինչպես և գոյականաբար գործածվող մյուս բառերի (թվականներ, դերանուններ) առարկայական կոնկրետ վերաբերությունը պարզվում է կոնտեքստում, խոսքի մեջ, հաճախ հենց նույն նախադասության մեջ:

Նրբեմն գոյականաբար գործածված բառի առարկայական վերաբերությունը կարող է որևէ կոնկրետ առարկա չնշանակել: Օրինակ՝ «Լավը չի մոռացվի» նախադասության մեջ լավը նշանակում է ընդհանրապես «լավ բանը»:

Որոշիչ հոդը ածականների և թվականների հետ կարող է գործածվել նաև նրանց արտահայտած հատկանիշները մտքով առարկայացնելու նպատակով,

առանց նշելու կամ ակնարկելու այդ հատկանիշների կրելը մի բանի կողմից: Օրինակ՝ երկուսը երեքից փոքր է: Վեցը երեքի կրկնապատիկն է, հետևապես և երեքը վեցի՝ կեսը: Կարմիրը ինձ շատ է դուր գալիս: Սևը բոլոր գույներից ինձ համար ամենատեղին է: Ընդգծված բառերի որոշիչ հոդը ոչ թե ցույց է տալիս, որ տվյալ հատկանիշը կրում է այս կամ այն առարկան, այլ միայն բառերի իմաստը մտքով առարկայացնում է:

Անորոշ դերբայի հետ ևս որոշիչ հոդը գործածվում է հենց այս վերջին իմաստով այսինքն՝ անորոշ դերբայի ցույց տված գործողության ընդհանուր գաղափարը մտքով առարկայացնելու նպատակով: Կարգալը զարգացնում է մարդուն: Պարտաճանաչ լինելը յուրաքանչյուրի պարտքն է: Թե՛ նվագելը և թե՛ երգելը նրա համար հավասարապես հաճելի են:

Ինչպես տեսնում ենք, անորոշ դերբայը որոշյալ առումով ցույց չի տալիս, որ գործողությունը կատարվում է մեկի կողմից: Սակայն երբեմն կոնտեքստում որոշյալ առումով գործածված անորոշ դերբայի ցույց տված, մտքով առարկայացված գործողությունը կարող է վերագրվել որևէ մեկին: Այսպես. Նրա դրելը շատ երկար տեեց, Քո կարգալը հաճույքով կարելի է լսել: Սակայն չի կարելի այս և նման օրինակների վրա հիմնվելով ասել, թե որոշյալ առումով անորոշ դերբայի մեջ կա գործողությունը մեկին վերագրելու անհրաժեշտություն, հնարավորություն: Որոշիչ հոդը այդպիսի իմաստ և անհրաժեշտություն չի տալիս անորոշ դերբային: Վերևում քննարկված մյուս բառերի մեջ այդպիսի իմաստ և անհրաժեշտություն կա, մի փառիսը նշանակում է «մի քանի բան», «վերջինը» նշանակում է «վերջին բանը», երկարը նշանակում է «երկար առարկան» և այլն: Բայց, օրինակ, կարգալը բայը արտահայտում է գործողության գաղափար, որը մտքով առարկայացված է:

Հնարավոր էլ չէ, որ անորոշ դերբայը որոշիչ հոդով ցույց տա նաև գործողությունը կատարողի ընդհանուր գաղափար: Ինչո՞ւ: Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է պարզել, թե ինչո՞ւ քննարկվող մյուս բառերը, այդ թվում և ենթակայական ու հարակատար դերբայները որոշյալ առումով այդպիսի իմաստ են արտահայտում: Վերցնենք այսպիսի օրինակ. «Քաղցրու» կապա էր հագնում երկար րևերով, որոնցից ձախը միշտ ծափ էր տալիս ծնկանը, իսկ աջը՝ հանգչում էր ուսի վրա» (Նար-Դոս): Այս նախադասության մեջ ձախը և աջը բառերը գործածված են «ձախ թևը» և «աջ թևը» շարահյուսական կապակցությունների փոխարեն: Այդ շարահյուսական կապակցությունները որոշիչի և որոշյալի կապակցություններ են: Թև բառը նորից գործածելու անհրաժեշտություն չկա, քանի որ րևերով և որոնցից բառերից հասկացվում է այն՝ առանց գործածվելու: Որոշյալները չգործածելով՝ նրանց տարտամ, ընդհանուր իմաստը հոդի միջոցով տրվում է որոշիչին, և վերջինս նախադասության մեջ կատարում է այն դերը, ինչ որ չգործածվող որոշյալները (տվյալ օրինակներում՝ ենթակայի դեր): Այսպիսով՝ այս և նման դեպքերում բառի մեջ որոշիչ հոդի միջոցով արտահայտված այդ հատկանիշը կրողի իմաստը չգործածվող որոշյալի ընդհանուր, տարտամ իմաստն է: Սակայն, եթե որոշիչը իր մեջ կարող է առնել որոշյալի իմաստը, ճիշտ է, անորոշ ձևով, ապա հատկացյալը հատկացուցչի իմաստը իր մեջ առնել չի կարող: Վերևի կապակցությունները՝ «իմ կարգալը», «քո գրելը» և այլն հատկացուցչի և հատկացյալի կապակցություններ են, և դրանց հատկացուցիչը հատկացյալի մեջ կարող է արտահայտվել միայն ս, դ, ստացական հոդերի և ոչ թե ը որոշիչ

հողի միջոցով: Ուրեմն՝ անորոշ դերբայի որոշյալ առումը նրա ցույց տված գործողությունը մտքով առարկայացնելու արտահայտություն է:

Որոշիչ հոդը կարող է գրվել նաև նյութական իմաստ շունեցող բառերի, քերականական ձևերի, նույնիսկ և այլ միավորների վրա՝ կազմելով փոխանուններ: Նրե-ն ստորադասական շաղկապ է: Վաչ-ի վրա բացականչական նշան դիր: Թե-ն և՛ համադասական իմաստ ունի, և՛ ստորադասական: Կուցե-ներ շատ ես գործածում: Տանից-ի փոխարեն լավ կլինեիր գործածելի տնից: Տ-ի և ղ-ի միջև ձայնային երանգի տարբերություն կա:

Մի դիտողություն ևս՝ որոշյալ ու անորոշ առումների վերաբերյալ: Մենք տեսանք, որ սեռական (ոչ փոխանուն), բացառական, գործիական, ներգոյական հոլովները որոշիչ հոդ սովորաբար չեն ընդունում: Արդյո՞ք բառերի այս վերջին հոլովները, որոնց վրա որոշիչ հոդ չի գրվում, և հոդ (որոշիչ) չընդունող բառերը որոշյալ և անորոշ առման կատեգորիա ունեն:

Հասկանալի է, որ առարկայական վերաբերություն ունեցող յուրաքանչյուր բառ անկախ այն բանից, որոշիչ հոդ ստանում է, թե ոչ, խոսքի մեջ կարող է ցույց տալ առարկա, անձ որոշյալ կերպով (այս կամ այն առարկան, անձը) և իր, անձ անորոշ կերպով, անորոշ իմաստով (ոչ այս կամ այն անձը, իրը):

Օրինակ՝ երկաթուղով ճանապարհորդելն ավելի հետաքրքիր է, քան ինքնաթիռով: Այդ երկաթուղով ես շատ եմ ճանապարհորդել:

Պարզ է, որ երկաթուղով բառը առաջին նախադասության մեջ անորոշ իմաստ ունի, չի ակնարկում, նշում այս կամ այն երկաթուղին, իսկ նույն բառը երկրորդ նախադասության մեջ ունի որոշյալ իմաստ, ցույց է տալիս կոնկրետ մեկ երկաթուղի: Սակայն բառի որոշյալ և անորոշ իմաստներով այդպիսի գործածությունները որոշյալ և անորոշ առման արտահայտություն համարել չի կարելի: Որոշյալ և անորոշ առման կատեգորիան, եթե որոշելու լինեինք միայն բառի կամ բառաձևի իմաստով, պետք է տեսնեինք աշխարհի բոլոր լեզուներում: Այդ կատեգորիան քերականական կատեգորիա է, իսկ ամեն մի քերականական կատեգորիա ունի իր գրական միջոցը, ունի իր ձևը: Այդ կատեգորիան հայերենում առկա է որոշիչ հոդի առկայության շնորհիվ: Որոշիչ հոդն է, որ բառին տալիս է որոշյալ իմաստ, ստեղծում որոշյալ առում, որով և բառը հակադրվում է իր համադասական ձևի անհոդ գործածության անորոշ իմաստին: Ուրեմն՝ այն բառերը և այն հոլովաձևերը, որոնք որոշիչ հոդ սովորաբար չեն ընդունում, որոշյալ և անորոշ առման կատեգորիա ունենալ չեն կարող: